ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ

Ս. Ջ. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

Հայ պատմագիտության և բանասիրության մեջ վաղուց ի վեր բանավեճ է մղվում այն հարցի շուրջը, թե ով է եղել հայոց Արշակ II թագավորի առաջին կինը՝ բյուզանդական արքունիքից առաքված Օլիմպիա՞ն, թե՞ Սյունյաց Անդոկ նախարարի դուստր Փառանձեմը։ Եվ այս վեճի արմատները դարերի խորքն են գնում, հասնում մինչև մեր առաջին պատմիչները։

Անդրադառնալով Արշակ II-ի անձնական կյանքի հանգամանքներին՝ Փավստոս Բուզանդը պատմում է նրա եղբորորդի Գնելի սպանության մասին, որից հետո Արշակն իրեն կին է առնում նրա գեղանի այրուն՝ Փառանձեմին։ Բայց որքան Արշակը շատ էր սիրում կնոջը, սա այնքան ավելի էր ատում նրան՝ պատճառաբանելով, թե գույնով թուխ է և մարմնով՝ թավամազ։ «Վերջը,—գրում է Բուզանդը,—երբ կնոջ սիրտը նրան չկպավ, Արշակ արքան մարդ ուղարկեց Հունաց երկիրը և այնտեղից՝ կայսերական տոհմից, խնդրեց, բերել տվեց իրեն կին Ողոմպի անունով։ Նրան ուժգին սիրով սիրեց և նրանով գրոդքոում էր առաջին կնոջ նախանձը»[1]։ Սրտում ոխ պահելով արքայի նոր կնոջ դեմ՝ Փառանձեմը միջոց էր որոնում նրան շարքից հանելու, բայց չէր կարողանում, քանի որ Օլիմպիան իրեն չափազանց զգույշ էր պահում. ուտում էր միայն իր հավատարիմ նաժիշտների պատրաստած կերակուրները և խմում նրանց տված գինին։ Այդ կասկածամտությունն ավելի էր գրգռում Փառանձեմին, մինչև որ իր կանացի հնարամտության շնորհիվ նա հասավ իր բաղձալի նպատակին։ Նրանից կաշառված արքունական պալատի երեց Մրջյունիկ քահանան հաղորդության ժամանակ եկեղեցում թունավորեց Օլիմպիային և սպանեց նրան։

Այս ամենը հավաստում է նաև Մովսես Խորենացին, բայց մի էական տարբերությամբ. նրա ասելով՝ Օլիմպիան Արշակի առաջին կինն էր, Փառանձեմը՝ երկրորդը[2]։

Հետագա շրջանի ուսումնասիրողները հիմնականում Պատմահորն են հետևել՝ փորձելով անել ինչ-ինչ ճշտումներ։ Այսպես, Մ. Չամչյանը, նախորդների հետևողությամբ, պատմում է Վաղենտիանոս Օգոստոս կայսեր մոտ Արշակի կողմից ուղարկված հատուկ պատգամավորության մասին, որի նպատակն էր ամրապնդել դաշինքը երկու տերությունների միջև։ Ներսես կաթողիկոսի դելխավորած այդ պատվիրակությունը լավ ընդունելության է արժանանում կայսերական արքունիքում և թանկագին նվերներ ստանում։ Բյուզանդական կայսրը ոչ միայն հայոց պատանդներին՝ Արշակի եղբորորդիներ Գնելին ու Տիրիթին է ազատ արձակում, այլև իր ազգից Արշակին կնության է տալիս մի կույս՝ Օլիմպիադա անունով, «զի մեռեալ էր առաջին կին նորա»[3]։ Ա. Գարագաշյանը ևս Արշակի ամուսնությունը Օլիմպիայի հետ դնում է նրա թագավորության սկզբում։ Անհավանական համարելով արդեն ամուսնացած Արշակին կին տալը՝ նա մասնավորապես նկատում է. «Հայտ է ուրեմն թե այս ամուսնություն եղավ ի սկզբան թագավորությանն Արշակա, ի կողմե Կոստանդա, թերևս ավելի պնդով կապելու համար ընդ ինքյան զԱրշակ, և ոչ ի խնդրո Արշակա, և որպես կարգ պատմությանն կպահանջե՝ հառաջ քան զառնուլն Արշակա զՓա-

---

1 Փավստոս Բուզանդ. Պատմություն հայոց. Երևան, 1968, էջ 174։

2 Տե՛ս Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. Երևան, 1961, էջ 285—288։

3 Մ. Չամչյան. Հայոց պատմություն. հ. 1, Երևան, 1985, էջ 444։

սանձեմ»[4]։ Գարագաշյանը մերժում է Բուզանդի վկայությունը և համոզված ընդգծում, թե Փառանձեմն էր «երկրորդ կին կամ հարճ Արշակա»[5]։ Աղբյուրների քննությունից ի վերջո այդ տեսակետին է հանգում նաև Հ. Մանանդյանը՝ միաժամանակ հենվելով Մարկվարտի տոմարագիտական դիտողությունների վրա։ Բայց եթե Մարկվարտը վերոհիշյալ պատգամավորության առաքումը և վերադարձը (Օլիմպիայի հետ միասին), դնում է 357 թ., ապա Մանանդյանը ենթադրում է 353 և 357 թթ. միջև[6]։ Այսպես թե այնպես, ստացվում է, որ 357 թ. Օլիմպիան արդեն հայոց թագուհին էր։

Ինքնին հասկանալի է, որ նույն շքախմբի կազմում Հայաստան վերադարձող Գնելը դեռ պիտի ամուսնանար Փառանձեմի հետ, նոր միայն Արշակը տիրանար նրա այրուն։ Մանրամասնորեն շարադրելով Գնելի սպանության պատմությունն ըստ Փավստոսի՝ Մարկվարտը գտնում է, որ այդ սպանությունը տեղի է ունեցել Նավասարդի տոնին՝ 359 թ. օգոստոսի 29-ին[7]։ «Այնուհետև,— գրում է Մանանդյանը,—Արշակը Փառանձեմին առնում է իրեն կին, կամ ավելի ճիշտ՝ իրեն հարճ, որովհետև նա արդեն ամուսնացած էր Ոլիմպիայի հետ»[8]։ Ի դեպ, Ն. Ակինյանը ևս 359 թ. է նշում որպես Արշակի և Փառանձեմի ամուսնության տարեթիվ[9]։ Համաձայնել այս կարծիքի հետ, նշանակում է ընկնել հակասությունների մեջ։ Նախ՝ Բյուզանդիայից վերադարձող Գնելին Խորենացին «մանուկ» է անվանում, Բուզանդը՝ «պատանի»[10], մյուս կողմից՝ Մանանդյանն ինքն է միանգամայն սխալ համարում Օրմանյանի այն ենթադրությունը, թե Պապը ոչ թե Փառանձեմի, այլ Օլիմպիայի որդին էր՝ ծնված 351 թ.[11]։ Մեր առաջին պատմիչները՝ Բուզանդը և Խորենացին, պարզորոշ վկայում են, որ Պապը Փառանձեմի որդին է[12]։ Ավելին՝ Մարկվարտը նույնիսկ այն միտքն է հայտնում, որ Արշակը Փառանձեմի հետ ամուսնացել էր իր առաջին կնոջից՝ Օլիմպիայից գավակ չունենալու պատճառով[13]։ Մարկվարտի և Մանանդյանի հաշվումների համաձայն Պապը ծնվել է առնվազն 360 թ., որովհետև Արշակը Գնելին սպանել տալուց հետո էր սեփականել նրա կնոջը։

Պապի տարիքի խնդիրը դեռևս վեճի առարկա է և վերջնականապես ճշտված չէ, մի բան կասկած չի հարուցում, սակայն, որ նա հաջորդել է հորը՝ Արշակ թագավորին, և դավադրաբար սպանվել 374 թ.։ Ստացվում է, որ նա թագավոր է դարձել 9—10 տարեկան հասակում, մի շարք խոշոր ճակատամարտեր շահել, բազմաթիվ բարեկարգումներ կատարել երկրում և սպանվել 14 տարեկանում։ Մարկվարտն այդպես էլ կարծում է, բայց այս հարցում Մանանդյանը նրա հետ չի համաձայնում և գտնում է, որ «այս մութ խնդիրը հավանական լուծում կարող է ստանալ, եթե ենթադրենք, որ Պապը, լինելով Փառանձեմի ու Գնելի որդին, Արշակ Բ-ի ոչ թե հարազատ, այլ խորթ որդին էր»[14]։

Եթե նույնիսկ ենթադրենք, թե Պապը երկու որդի (Արշակ և Վաղարշակ) ունենալուց հետո էլ 374 թ. լիներ թեկուզ 20 տարեկան, միևնույն է, դարձյալ Արշակի ամուսնությունը Փառանձեմի հետ ավելի վաղ տեղի ունեցած պիտի լիներ, քան Օլիմպիայի Հայաստան գալը։ Ինչպես իրավացիորեն նկատել է

---

4 Ա. Գարագաշյան. Քննական պատմություն հայոց. մասն Գ, Թիֆլիս, 1895, էջ 55—56։

5 Նույն տեղում, էջ 60։

6 Տե՛ս Հ. Մանանդյան. Երկեր. հ. Բ, Երևան, 1978, էջ 164։

7 Տե՛ս նույն տեղում, էջ 167։

8 Նույն տեղում։

9 Տե՛ս Ն. Ակինյան. Մատենագրական հետազոտություններ. Վիեննա, 1924, էջ 111։

10 Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 285։ Փավստոս Բուզանդ, էջ 172։

11 Տե՛ս Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 207։

12 Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 288։ Փավստոս Բուզանդ, էջ 174։

13 Տե՛ս Հ. Մանանդյան. նշվ. աշխ.։

14 Նույն տեղում, էջ 208։

Գ. Տեր-Մկրտչյանը, 374 թ. «Պապը չափահաս և կատարելահասակ մարդ էր և ո՛չ անչափահաս պատանի, ուրեմն՝ առնվազն 25—30 տարեկան։ Պապի ծնունդը և Արշակի ամուսնությունը Փառանձեմի հետ, այս հաշվով, պետք է 350 թվից առաջ դնել»[15]։

Հայտնի է, որ ո՛չ Փավստոս Բուզանդը, ո՛չ Խորենացին Արշակ II-ի մասին իրենց պատմած դեպքերին ու իրադարձություններին ժամանակակից չեն եղել։ Բնականաբար, չի բացառվում, որ նրանց վկայություններում կարող էին ժամանակագրական ինչ-ինչ անճշտություններ լինել։ Բայց մեզ է հասել նաև ժամանակակցի՝ լատինական մատենագիր Ամմիանոս Մարկելլինոսի աշխատությունը, որն անձամբ մասնակցել է 359—363 թթ. պարսկա-հռոմեական պատերազմներին։ Նա պատմում է պարսիկների կողմից Ամիդ քաղաքի աղետալի կործանման մասին (359 թ. հոկտեմբերի 6-ին)։ Այդ դեպքը ցնցել էր հռոմեացիներին և հայերին, իսկ հաջորդ տարվա սկզբին Շապուհի արշավանքը կրկնվում է։ Կոստանդիոս կայսրը, որն արևմուտքում պատերազմում էր իր հակառակորդի՝ Հուլիանոս Օգոստոսի հետ, ստիպված էր առաջին հերթին պարսկական վտանգի դեմն առնել։ 360 թ. գարնանը, բանակի գլուխ անցած, նա գալիս է Կապադովկիայի Կեսարիա քաղաքը՝ նպատակ ունենալով համակենտրոնացնել ինչպես կայսրության, այնպես էլ դաշնակիցների բոլոր ուժերը։ Հայոց թագավորի աջակցությունն այդ վճռական պահին նրա համար առանձնահատուկ նշանակություն ուներ. հայկական զինված ուժերը կարող էին բախտորոշ դեր խաղալ առաջիկա պատերազմում։ «Կոստանդիոսը իր մոտ կանչեց Հայոց թագավոր Արշակին,—գրում է Ամմիանոսը,—ընդունեց նրան ամենամեծ սիրալիրությամբ և ամեն կերպ հորդորեց նրան, որ հավատարիմ բարեկամ մնա մեզ։ Որովհետև նա լսել էր, որ Պարսից թագավորը բազմիցս փորձեր էր արել, դիմելով խաբեության, սպառնալիքների և նենգության, որպեսզի նրան հարկադրե հրաժարվել Հռոմի հետ դաշնակցությունից և սերտ կերպով կապե իրեն հետ։

Արշակը կրկին ու կրկին հավաստիացրեց, որ ավելի շուտ վերջ կտա իր կյանքին, քան կփոխե իր մտադրությունը։ Եվ նա վերադարձավ իր երկիրը, ստացած լինելով իր շքախմբի հետ առատաձեռն ընծաներ, և այնուհետև չհամարձակվեց որևէ կերպ դրժել իր խոստումները։ Չէ՞ որ Կոստանդիոսը նրան բազմազան շնորհումներ էր արել, որոնցից ամենամեծը, ի միջի այլոց, այն էր, որ կայսրը տվել էր նրան կին Ոլիմպիային, պրետորականների նախկին պրեֆեկտ Աբլաբիոսի աղջկան, որն առաջ նրա Կոստաս եղբոր նշանածն էր»[16]։

Ամեն ինչ պարզ է ասված։ Այս հավաստի փաստը վկայակոչելով՝ Լեոն միանգամայն իրավացիորեն ընդգծում է. «ժամանակակից և ճշմարտապատում Ամմիանոսի այս բացարձակ վկայությունը հերքում է բոլոր այն հին ու նոր կարծիքները՝ իբր թե Օլիմպիադան Արշակի առաջին կինն էր, Փառանձեմը՝ երկրորդ»[17]։ Պատմաբանի կարծիքով, արդեն ամուսնացած Արշակին կին տալու մեջ էլ անհավանական ոչինչ չկա, քանի որ քրիստոնյա Արշակունիների արքունիքում, ինչպես և հայոց նախարարության մեջ, դեռ չէր վերացել բազմակնության սովորությունը։ Բնորոշ է, որ Արշակին իր կողմը գրավելու համար Կոստանդիոսից առաջ պարսից Շապուհ արքան էր փորձել նրան կնության տալ իր դստերը։ «Իսկ երբ Անդոկը՝ Սյունյաց գավառի նահանգապետը,—պատմում է Բուզանդը,—իմացավ, թե Պարսից Շապուհ թագավորն ուզում է իր աղջիկը կնության տալ Հայոց Արշակ թագավորին, շատ վախեցավ, և միտքը կասկածի մեջ ընկավ։ Նա հասկացավ, որ եթե Արշակը կին առնի Պարսից թագավորի դստերը, ապա իր դուստրը անարգություն կկրի, որովհետև այդ ժամանակ Փառանձեմը՝ Անդոկի դուստրը, որը Գնելի կինն էր եղել, Հա-

15 Գ. Տեր-Մկրտչյան. Հայագիտական ուսումնասիրություններ. գիրք Ա, Երևան. 1979, էջ 369։

16 Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 177։

17 Լեո. Երկերի ժողովածու. հ. 2, Երևան, 1967, էջ 461։

յոց Արշակ թագավորի կինն էր. ուստի (Անդոկը) կասկածում էր, որ եթե թագավորը ուրիշ կին առնի, իր աղջկան կանարգի»[18]։ Ուղղակի պատվին նախանձախնդիր Սյունյաց նախարարն արեց ամեն ինչ՝ այդ ամուսնությունը խափանելու, բայց անկարող գտնվեց արգելելու բյուզանդուհու մուտքը հայոց արքունիք։ «Տիկնաց աիկնոջ» բարձր դիրքի համար դաժան և անզիջում պայքար ծավալվեց Փառանձեմի և Օլիմպիայի միջև, որը հայանի է, թե ինչ վախճան ունեցավ։ Նենգավոր ախոյանուհուն մեջտեղից վերացնելուց հետո, որը, թերևս, նույն դիտավորությունն ուներ Փառանձեմի նկատմամբ, Փառանձեմը վերստին ձեռք բերեց իր նախկին ազդեցությունն Արշակ թագավորի վրա։ Այդ բալով նա միաժամանակ ուղի էր հարթում իր որդու՝ Պապի համար՝ դեպի հայոց թագավորի գահը։

Այսպիսով, վերջնականապես լուծված պետք է համարել այն հարցը, թե ով է եղել հայոց Արշակ Երկրորդ թագավորի առաջին կինը՝ Օլիմպիա՞ն, թե՞ Փառանձեմը։ Եթե Օլիմպիան Հայաստան է եկել 360 թ., ապա Փառանձեմը, չնայած այն բանին, որ Արշակն իրենից առաջ էլ ամուսնացած է եղել[19], Արշակի թագավորության սկզբից ևեթ եղել է հայոց թագուհին։

ОБ ОДНОМ ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКОМ УТОЧНЕНИИ

С. З. ИСКАНДАРЯН

Резюме

В армянской историографии и филологии давно идут споры вокруг вопроса о том, кто была первая жена армянского царя Аршака Второго—дочь сюнийского нахарара Апдока Парандзем или посланница византийского царского дворца—Олимпия? Дело в том, что мнения первых армянских историков V века Фавстоса Бузанда и Мовсеса Хоренаци по этому вопросу расходятся. Впоследствии преобладает точка зрения Хоренаци, согласно которой Олимпия была первой женой Аршака, а Парандзем—второй. На основании анализа ряда фактов в статье утверждается, что в действительности было наоборот.

---

18 Փաստոս Բուզանդ, էջ 183։

19 Ուշագրավ է, որ Բուզանդն իր «Պատմության» սոսկ մի տեղ ասում է, թե Վարազդատ թագավորը հպարտանում էր, որ ինքը Պապի եղբորորդին է (տե՛ս նույն տեղում, էջ 279)։ Եթե դա իրոք այդպես էր, ապա նրա հայրը պետք է ծնված լիներ Արշակի առաջին կնոջից, նախքան Փառանձեմի հետ ամուսնանալը։